# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.1

## ՀՀ ԱԱԾ-ՏԱԵԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/14-ՀՊՍՅ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **29 մայիսի 2026թ.**

2026թ. մայիսի 29-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ցանցային և միացման մալուխների, ցանցային բաժանարարների, սնուցման բլոկերի, մոդեմների, համակարգչի կոշտ սկավառակների և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏԱԵԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/14-ՀՊՍՅ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Խաչատրյան՝ ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից,
Ա. Օհանջանյան՝ ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից,
Ա. Աբրահամյան՝ ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Խաչատրյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է չորս անդամից, հանձնաժողովի անդամ, ՀՀ ԱԱԾ ՍՁ աշխատակից՝ Տ. Կոստանյանը բացակայում էր և Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ և ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, տեղեկացվեց,

որ 26.05.2026թ-ին ժամը 22:48:43-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի՛ գործընկեր, 16-րդ և 17-րդ չափաբաժիններում գոյություն ունի վրիպակ՝ մալուխների չափման միավորը պետք է լինի մետր:»:

29.05.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի մասնակից, Հարգելի՛ գործընկեր, 16-րդ չափաբաժնում ներառված են՝ 1000 հատ յուրաքանչյուրը 1 մետր նշումով չկտրված, ամբողջական մալուխ ընդհանուր 1000 մետր: 17-րդ չափաբաժնում ներառված են՝ 300 հատ յուրաքանչյուրը 1 մետր նշումով չկտրված, ամբողջական մալուխ ընդհանուր 300 մետր:»:

2. Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 1-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29.05.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Խաչատրյան ______________

*Հանձնաժողովի անդամ՝*

Ա. Օհանջանյան ______________

Ա. Աբրահամյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ______________